ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27փետրվարի 2012 թվական թիվ 7 - Ա

ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 6-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի թիվ 1918- Ն <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> որոշումով՝

Կ ա ր գ ա դ ր ում ե մ

1. Ստեղծել <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով >> հետևյալ կազմով՝

Ա. Ղուլարյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետ

Հանձնաժողովի անդամներ՝

Մ. Մխիթարյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
Ռ. Մելիքջանյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա. Նազարյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
Մ. Մելքումյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Վ. Կարապետյան- <<Տավուշի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն
Ռ. Մուրադյան- ՊՄՊ Տավուշի մարզային ծառայության պետ
Ռ. Օթարյան- ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժնի պետ
Ա. Դանիելյան- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Տավուշի տարածքային բաժնի պետի տեղակալ
Ա. Ուլիխանյան- Էներգետիկայի պետական տեսչության Հյուսիսային միջմարզային բաժնի առաջատար մասնագետ
Մ. Հարությունյան- ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ-ի աշխատակազմի Տավուշի մարզային ստորաբաժանման հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի առաջին կարգի մասնագետ

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2009 թվականի փետրվարի 2-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 6-Ա կարգադրությունը
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

27 փետրվարի 2012թ.
ք. Իջևան